Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
մարտի 11-ի N 123 - Ա
որոշման

«ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	**Ծրագրի նպատակը**	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել մեկհարկանի ժամանակակից միջազգային ամենաբարձր ստանդարտներին համապատասխան համագումարների կենտրոն: Ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է մոտ 2,500 քառ. մ և այն իր տեսակի մեջ անանախադեպ շինություն է լինելու տարածաշրջանում, համալրելով ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանը Լոռիում: Հիմնադրամն արդեն ունի նմանօրինակ շինությունների կառուցման փորձ և անկասկած համագումարների ժամանակակից այս կենտրոնը չի զիջելու արդեն իսկ գործող ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնին և ավանի մաս կազմող Կոնցեպտ հյուրանոցին: Համագումարների կենտրոնը միջոցառումների ընթացքում կարող է հյուրընկալել միաժամանակ մինչև 200 մարդ՝ հնարավորություն ստեղծելով տարածաշրջանում իրականացնել միաջազգային ամենաբարձր մակարդակի միջոցառումներ: Կենտրոնը զուգահեռաբար կօգտագործվի տարածաշրջանի և նրա բնակիչների բազմակողմանի զարգացման նպատակով՝ ներառյալ ամառային դպրոցների, տարածաշրջանային քննարկումների և տարածաշրջանի համար այլ կարևոր միջոցառումների համար: Կենտրոնի ճարտարապետությունը համապատասխանելու է 21-րդ դարի լավագույն փորձին և այն հագեցած է լինելու բարձր տեխնոլոգիաների ամենավերջին ձեռքբերումներով: Հիմնադրամն արդեն իսկ ունի պայմանավորվածություններ մի շարք միջազգային և տեղական կառույցների հետ, որոնք հայտնել են իրենց պատրաստակամությունը օգտագործելու կենտրոնը բարձր մակարդակի համաժողովների և միջոցառումների համար՝ այն պատրաստ լինելուն պես:
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:

3.	**Բարեգործը**	«Չիլդրեն օֆ Արմենիա ֆանդ Ինք.», Նյու Յորք, ԱՄՆ, 149 5-րդ ավենյու, սենյակ 500 (Children of Armenia Fund Inc. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. և դոկտոր Գարո Հ. Արմենը
4.	**Ծրագիրը կատարողը**	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ քաղ. Երևան 0001, Հյուսիսային պող. 1, 8-րդ հարկ, 24 սենյակ, ՀՎՀՀ՝ 02569972)
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	ՀՀ Լոռու մարզ, Դեբեդի համայնք, համայնքային զարգացում
6.	**Ծրագրի բյուջեն**	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 2,500,000.00 դոլարին համարժեք 1,201,250,000 դրամ:
7.	**Բարեգործություն ստացողը**	ՀՀ Լոռու մարզ, Դեբեդի համայնք
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	2020 թվականի մարտի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	Համագումարների կենտրոնի կառուցման ընդհանուր շինարարական, ներքին հարդարման, տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 1,287,700 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 618,739,850 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2020 թվականի մարտի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 1-ը: Ջեռուցման, օդափոխության, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, կոյուղու և անվտանգության համակարգերի նախագծման, կառուցման ու սարքավորումների մոնտաժման աշխատանքներ՝ 183,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 87,931,500 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2020 թվականի մայիսի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը: Համագումարների կենտրոնի տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 17,360 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 8,341,480 դրամ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի փետրվարի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 1-ը: Շինարարական նյութերի, ներքին հարդարման պարագաների, արտաքին լուսավորության սարքավորումների, կահույքի, երաժշտական համակարգի, ֆոտովոլտային կայանների, ձայնային և լուսատեխնիկական համակարգերի, թարգմանչական սարքավորումների և այլ անհրաժեշտ նյութերի ու պարագաների ձեռքբերման և մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 1,012,640 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 486,573,520 դրամ, նախատեսվում է իրականացնել 2020 թվականի հունիսի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը:

10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	- համագումարների կենտրոնի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 944,640 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 453,899,520 դրամ, - ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 243,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 116,761,500 դրամ, - տանիքի կառուցման աշխատանքների իրականացում՝ 112,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 53,816,000 դրամ, - արտաքին ինժեներական (ջրագծերի, կոյուղու, էլեկտրամատակարարման) աշխատանքների իրականացում՝ 183,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 87,931,500 դրամ, - համագումարների կենտրոնի կահավորման աշխատանքներ՝ 200,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 96,100,000 դրամ, - տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 17,360 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 8,341,480 դրամ, - տեխնիկական վերազինման աշխատանքներ (ձայնային համակարգ, լուսատեխնիկայի համակարգ, բարձրախոսներ, խոսափողներ, երաժշտական գործիքներ, երաժշտական մասնագիտական բաղադրիչ տարրեր, կահույք, սանտեխնիկա, կառուցվող շինության համար նախատեսված շինանյութ, արևային պանելներ, ֆոտովոլտային կայաններ)՝ 800,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 384,400,000 դրամ, Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարեգործական բեռների ներմուծում 1,000,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 480,500,000 դրամի շրջանակներում, մասնավորապես, ձայնային և լուսատեխնիկայի համակարգեր, թարգմանչական սարքավորումներ, բարձրախոսներ, խոսափողներ, երաժշտական գործիքներ, երաժշտական մասնագիտական բաղադրիչ տարրեր, կահույք, գրքեր, կենցաղային տեխնիկա, շինարարական նյութեր, արևային պանելներ, ֆոտովոլտային կայաններ և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կնքել պայմանագրեր կապալառուների հետ՝ նախագծային, շինարարական, հսկողական աշխատանքների կատարման և փորձագետների մասնագիտական վերահսկողական ծառայությունների ձեռքբերման համար՝ 300,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք 144,150,000 դրամի շրջանակներում, մասնավորապես, կառուցվող շինության ներքին հարդարման աշխատանքների, արտաքին ինժեներական ցանցերի, բարեկարգման աշխատանքների, տեխնիկական վերազինման և այլ ծառայությունների համար, որոնք իրական նշանակություն ունեն ծրագրի ամբողջական կատարման համար:
11.	**Ծրագրի իրա-կանացման հետ կապված կազմա-կերպական ծախսերը**	Չեն նախատեսվում:

12.	**Համագործակցությունը պետական կառա-վարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազ-մակերպությունների հետ**	Նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի և Դեբեդի համայնքապետարանի հետ:
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմինը՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ